

Նկ. 72. Արձ. № 115:

3 թար միաբանեցաք Ածածնիս, տվաք խաչ մեծածախ մասամբ եւ ա-
4 յլ արդիւնս ի շինութի եկեղեցոյս: Տր Ստ եւ հայր Յոհ-
5 էս եւ միաբանքս էտուն մեզ Անդրէի առաք եւ Էպիփանու զամե-
6 ն էկեղէցիք պատարագել զՔս. մին Մելիքին եւ մին՝ Մամախին: Կատա-
րող(քն)
7 աւրհնին Ած:

Ծանոթություն.— Ձնելանց ազգանվան միայն Զ գիրն է երևում տեղում, այդ բառը վերականգնել ենք № 64 արձանագրության հիման վրա, որ նույն Ձնելանց Մելիքին է վերաբերում և ունի նույն անձնանունների համառոտագրությունները, ինչպես՝ Ստ (Ստեփաննոս), Յոհէս (Յովհաննէս):

## 117. Նույն նախագավթի հս պատին, № 115-ի կողքին

(Լուս. № 73)

**Հ Ձէ Մ 1258**

Հրատարակված է՝ Ջալ 36, Դրիմ 61, Վիմ 101

1 Ձէ:
2 Կամաւն Այ, ես՝ [Պ]ետրոս աշակերտ որ Ած-
3 ածնիս, էտու գիրք հարանց վարք եւ ա-
4 յլ արդիւնս յէկեղէցիս: Ես հայր Կիրակո-
5 ս, առաջնորդ սբ ուխտիս եւ միաբանքս տվաք զ-
6 ամէն էկեղէցիքս պատարագել զՔս ի տաւնի Պետրոսի եւ